

ՖԵՄԻՆԻԶՄԸ՝ ՄԱՐՄՆԱ(ԻՐԱ)ԿԱՆ

Միջազգային փառատոն

Հանրային միջոցառումներ

1.Անարդարության և նախապաշարմունքի թշնամի. Սրբուհի Թյուսաբը և 19-րդ դարի արևմտահայ ֆեմինիստական փիլիսոփայությունը

Բանախոս՝ Մելիսա Բիլալ (ԱՄՆ- Հայաստան)

22 մարտի, 2022

zoom առցանց հարթակ

Շատերի համար նշանավոր հեղափոխական, իսկ մյուսների համար սկանդալային դեկադենտ Սրբուհի Տիսաբը (1841-1901թթ., Կոնստանդնուպոլիս), որին «հայկական ժորժ Սանդ» են հաճախ անվանել, ժամանակակից արևմտահայ գրականության առաջին կին վիպասանն է: Իբրև կրթության հարցերով եռանդուն ակտիվիստ՝ իր ֆեմինիստական էսսեներում նա ջատագովել է կանանց կրթությունը և ընդդիմացել կանանց անգործությանը: Սեռերի միջև համակարգային անհավասարությունները և տղամարդկանց գերակայությունից առաջացած հասարակական չարիքները ցուցադրող իր երեք սիրավեպերում Տիսաբը պատկերում է ազատագրված հայ կնոջը, որը հավատարիմ է ինքն իրեն և տնօրինում է իր կյանքը:

Այս զրույցի ընթացքում Մելիսան Տիսաբի կյանքն ու աշխատանքը կկապի ուշ օսմանյան շրջանում հայերի կյանքում տեղի ունեցող սոցիալական և տնտեսական վերափոխումների պատմական համատեքստի հետ, ինչպես նաև կքննարկի Տիսաբի ֆեմինիզմի եզրագծերը իր ժամանակի համաշխարհային փիլիսոփայական հոսանքների հետ համեմատության մեջ:

Մելիսա Պիլալի մասին

Մելիսա Պիլալը Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Հայ երաժշտության ծրագրի փոխտնօրենն է և դասավանդում է համալսարանի երաժշտական ազգագրության (ethnomusicology) ամբիոնում: Նաև Հայաստանում Ամերիկյան Համալսարանի Գեներալային ուսումնասիրությունների ծրագրի հիմնական թիմի անդամ է: Ստամբուլի Բողազիչի համալսարանում սովորել է սոցիոլոգիա (բակալավր և մագիստրատուրա), իսկ Չիկագոյի համալսարանում ավարտել է երաժշտական ազգագրության գծով ասպիրանտուրան: Դասավանդել է Բողազիչի, ինչպես նաև Կոլումբիայի համալսարաններում: Մելիսայի հետազոտական աշխատանքը կենտրոնանում է հայկական փորձառության վրա

Թուրքիայի՝ փոքրամասնությունների և հիշողության հետ կապված քաղաքականության համատեքստում, ինչպես նաև հայ երաժշտական պրակտիկաների պատմական և ազգագրական ուսումնասիրության և ուշ օսմանյան շրջանում հայ մտավորական կյանքի գենդերային պատմության վրա:

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում որպես հրավիրյալ ուսումնագետ աշխատելու ընթացքում Մելիսսան Լեռնա Էքմեքչիօղլուի հետ համատեղ կազմակերպում է տարեկան հանդիպումների շարք Հայկական ֆեմինիստական ուսումնասիրությունների աշխատարանի շրջանակներում և ստեղծում է Հայկական ֆեմինիստական հետազոտությունների կոլեկտիվ: Պիլալը և Էքմեքչիօղլուն համատեղ հեղինակել են «Արդարության Աղաղակը. հինգ հայ ֆեմինիստ գրող Օսմանյան կայսրությունից մինչև Թուրքիայի Հանրապետություն (1862–1933)» գիրքը թուրքերենով, իսկ այժմ համագործակցում են «Ֆեմինիզմը հայերենով. պատմություն՝ փաստաթղթերում» (Stanford University Press, տպագրությունը՝ 2023-ին) գրքի և թվային հումանիտար գիտությունների նախագծի շրջանակներում: Թե՛ գիրքը, թե՛ նախագիծը կենտրոնանում են տասներկու հայ ֆեմինիստ գրող-ակտիվիստների կյանքի և ստեղծագործությունների վրա օսմանյան և հետօսմանյան համատեքստներում: Մելիսսան այժմ նաև աշխատում է սեփական մենագրության վրա, որի նախնական վերնագիրն է «Արթնացնող օրորոցային. հայկական բնիկության, երաժշտության և հիշողության գենդերային քաղաքականությունները ուշ շրջանի Օսմանյան կայսրությունում», ինչպես նաև «Հաշտեցման վնասվածքները. լինելով հայ Թուրքիայում» ազգագրական հետազոտության վրա:

2. «Ազգանվեր հայուհաց ընկերությունը» և Սիպիլի գրական և հասարակական գործնեությունը

Բանախոս՝ Արփի Աթաբեկյան

17 մարտի, 2022

zoom առցանց հարթակ

Սիպիլը ծնվել է 1863 թվականին, Սկյուտարում, Կոստանդնուպոլսում: Մեզ հայտնի գրող, հրապարակախոս և ուսուցչուհի Սիպիլի կյանքը եղել է չափազանց հետաքրքիր ու բեղուն: Արփի Աթաբեկյանի բանախոսությունն անդրադառնալու է Սիպիլի կյանքի և գործունեության կարևորագույն և շրջադարձային կետերին՝ ընդգծելով նրա մեծ ավանդը հայ կանանց կրթության ու դաստիարակության հարցում:

Արփի Աթաբեկյանի մասին

Ծնվել է Երևանում, 1989 թվականին: Ավարտել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը: 2011-ին ստացել է DAAD (Der Deutsche Akademische Austauschdienst e. V.) և Հումբոլդտի համալսարանի գերազանցության

կրթաթոշակ:

2014 թվականին ավարտել է գերմանաթուրքական մագիստրոսական ծրագրի հասարակագիտության բաժինը (GeT MA – Միջին Արևելքի Տեխնիկական Համալսարան/Բեռլինի Հումբոլդտ համալսարան):

2018 թվականին ստացել է Գենդերային ուսումնասիրություններ ծրագրի մագիստրոսի աստիճան Կենտրոնական եվրոպական համալսարանում: Արփի Աթաբեկյանի ակադեմիական հետաքրքրություններն են թուրքական մոդեռնիստական գրականությունը, ֆեմինիստական գրականությունը, գրականության սոցիոլոգիան:

Թարգմանական գործերի շարքում են՝ Էլիֆ Շաֆաք - «Ստամբուլի բիճը», «Եվայի երեք դուստրերը», «Պատիվ»:

Օրհան Փամուք - «Իմ անունը կարմիր է», «Սև գիրքը», «Կարմրահեր կինը»

Ահմեդ Ումիթ - «Ստամբուլի հուշը» և այլք:

3. Ֆեմինիզմը և բոլոր կենսատեսակների պաշտպանությունը շահագործումից

Աշխատարանի վարող՝ Արփի Գալֆայան ՖեմԳրադարան,

Հայրիշխանական համակարգի ամուր կապը ռասիստական, դասակարգային, հետգաղութային և այլ ճնշող համակարգերի հետ արդեն մի քանի տասնամյակ է՝ ֆեմինիստական քննարկումների մաս է կազմում: Այս հանդիպման ընթացքում դիտարկելու ենք ֆեմինիզմի և Մոլորակի վրա մեզ հետ միասին ապրող այլ կենսատեսակների շահագործման դեմ պայքարների առնչությունները: Նախատեսվում է ինտերակտիվ քննարկում, մեր անհատական կենսափորձի ռեֆլեքսիա, և ոչ միայն:

✘ Աշխատարանը տեղի կունենա ապրիլի 1-ին, ժամը 19:00-ին, ՖեմԳրադարանում (հասցե՝ Պուշկին 43, մանրամասների համար՝ ☎ 096372372)

✓ Միջոցառման լեզուն հայերենն է:

Աշխատարանը կազմակերպվում է ՖԵՄԻՆԻԶՄԸ՝ ՄԱՐՄՆԱ(ԻՐԱ)ԿԱՆ միջազգային փառատոնի շրջանակներում:

Համադրող՝ Սուսաննա Գյուլամիրյան

Համա-համադրող՝ ՖեմԳրադարան

Արփինե Գալֆայանը՝ իր մասին

2008-ից ներգրավված եմ եղել տարբեր հանրային պայքարներում, հիմնականում բնության պաշտպանության համար: Սակայն իմ գործունեությունը մեծ մասամբ ինտերսեկցիոնալ է՝ մասնակցել եմ նաև հանրային տարածքների պաշտպանության, սոցիալական արդարության, կանանց ազատագրման, խաղաղության համար կոլեկտիվ ջանքերին:

Բացի այդ հաճախ անցկացնում եմ ոչ-ֆորմալ կրթության դասընթացներ ինքնակազմակերպման, իրավունքների պաշտպանության և հարակից թեմաներով: Զբաղվում եմ յոգայով, նաև ուսուցանում եմ դրա մի մասնիկը:

Ընկերուհիներիս հետ միասին Հայաստանում Համաներքին բուժման (Re-evaluation Counseling) համայնք ենք հիմնում: Հետաքրքրվում եմ նաև բույսերի աճեցմամբ և ջրի օգտագործման կենսակայուն համակարգերով:

Բանախոսությունը կազմակերպվել է ՖԵՄԻՆԻԶՄԸ՝ ՄԱՐՄՆԱ(ԻՐԱ)ԿԱՆ միջազգային
փառատոնի շրջանակներում:
Համադրող՝ Սուսաննա Գյուլամիրյան
Համա-համադրող՝ ՖեմԳրադարան